Պարույր Սևակ

Հուսահատության պահեր

Հուսահատության պահե՞ր:
Ինչպե՛ս չէ.
Լինում են, լինո՛ւմ,
Նույնիսկ ավելի՛, քան հարկավոր է:
Հուսահատվում եմ ինքըս ինձանից.
-Երբ շատ լավ գիտեմ,
Որ պետք է ասել «այո»,
Մինչդեռ ես «ոչ» եմ բղավում...
-Երբ ես՝ խելահաս ու հասուն արդեն,
Երեխայի պես այն եմ դուրս տալիս,
Ինչ տան գաղտնիք է.
Փոքրը տան թե մեծ,-
Մի՞թե նույնը չէ...
-Երբ իմ սիրածից չհիասթափված,
Ավելին՝ նրան դարձյա՛լ սիրելով՝
Հափշտակվում եմ նորահայտ մեկով...
-Երբ ես հենց այսպե՛ս անկեղծանում եմ՝
Ի՛նքս էլ, ա՜խ, ի՛նքս էլ լավ հասկանալով,
Որ արդեն այսչափ անկեղծանալուց
Մինչև երջանիկ հիմարությունը
Կես քայլ է միայն...

-Հուսահատվում եմ նաև ա՛յն բանից,
Թե որքա՞ն պիտի դեռ հուսահատվեմ
Ինքս ինձանից...

26.XII.1959թ.
Թիֆլիս